

## **Նպատակ 7: Ապահովել բոլորի համար մատչելի, հուսալի, կայուն և ժամանակակից էներգիայի հասանելիություն**

Էներգիան առանցքային դեր ունի այսօրվա աշխարհում առկա գրեթե բոլոր խոշոր մարտահրավերների և հնարավորությունների հարցում: Լինի դա աշխատանքի, անվտանգության, կլիմայի փոփոխության, սննդի արդյունաբերության կամ եկամուտների ավելացման համար, էներգիայի հասանելիությունը կենսական նշանակություն ունի բոլոր ոլորտներում:

Կայուն էներգիան հնարավորություն է, այն փոխակերպում է կյանքը, տնտեսությունները և մոլորակը:

ՄԱԿ-ի Նախկին գլխավոր քարտուղար Բան Կի-մունը 2011 թ. սեպտեմբերին Նախաձեռնեց «Կայուն էներգիա բոլորի համար» ծրագիրը՝ ապահովելու էներգիայի ժամանակակից ծառայությունների համընդհանուր հասանելիություն, բարելավելու արդյունավետությունը և ընդլայնելու էներգիայի վերականգնվող աղբյուրների օգտագործումը:

### **ԻՆՉՈ՞Ւ Է ԱՅՆ ԿԱՐԵՎՈՐ**

*Էներգիան կլիմայի փոփոխությանը նպաստող հիմնական գործոնն է՝ հենց էներգիային է վերագրվում ջերմոցային գազերի արտանետումների համաշխարհային ծավալի շուրջ 60%-ը:*

### **Ո՞րն Է Նպատակը**

Ապահովել բոլորի համար մատչելի, հուսալի, կայուն և ժամանակակից էներգիայի հասանելիություն:

### **Ինչո՞ւ**

Անխափան գործելու և հավասարաչափ զարգանալու համար մեր առօրյա կյանքը կախված է հուսալի և մատչելի էներգիայի ծառայություններից:

Չարգացած էներգետիկ համակարգն աջակցում է բոլոր ոլորտներին՝ գործարարությունից, բժշկությունից և կրթությունից մինչև գյուղատնտեսություն, ենթակառուցվածքներ, հաղորդակցություն ու բարձր տեխնոլոգիաներ:

## **Ինձ համար հասանելի է էլեկտրականությունը: Ինչո՞ւ պետք է ինձ մտահոգի այս նպատակը:.**

Տասնամյակներ շարունակ հանածո վառելիքը, մասնավորապես՝ ածուխը, նավթը կամ գազը, եղել է էլեկտրաէներգիայի արտադրության հիմնական աղբյուրը, սակայն ածխածնային վառելիքի այրումը արտադրում է մեծ քանակությամբ ջերմոցային գազեր, որոնք կլիմայի փոփոխության պատճառ են դառնում և վնասակար ազդեցություն ունեն մարդկանց բարեկեցության ու շրջակա միջավայրի վրա: Այս ամենն ազդում է բոլորի վրա, ոչ թե միայն մի քանիսի: Ավելին, էլեկտրականության սպառման համաշխարհային ծավալն արագորեն աճում է: Կարճ ասած, առանց էլեկտրականության հաստատուն մատակարարման երկրները չեն կարողանա զարգացնել իրենց տնտեսությունները:

### **Որքա՞ն մարդ է ապրում առանց էլեկտրականության**

Ավելի քան 1,2 մլրդ մարդ՝ համաշխարհային բնակչության յուրաքանչյուր հինգ մարդուց մեկը, չունի էլեկտրականությունից օգտվելու հնարավորություն: Նրանց մեծամասնությունն ապրում է Աֆրիկայի և Ասիայի շուրջ տասներկու երկրում:

Առանց էլեկտրականության, կանայք և աղջիկներն ստիպված են ժամեր վատնել ջուր բերելու համար, կլինիկաները չեն կարողանում երեխաների համար պատվաստանյութեր պահել, բազմաթիվ դպրոցականներ չեն կարողանում երեկոյան կատարել տնային հանձնարարությունները, մարդիկ չեն կարողանում զարգացնել մրցունակ բիզնեսներ: 2,8 մլն մարդ կերակուր պատրաստելու և ջեռուցման համար օգտագործում է փայտ, փայտածուխ, գոմաղբ և ածուխ, ինչը հանգեցնում է տարեկան ավելի քան 4 մլն մարդու վաղարժամ մահվան՝ օդի աղտոտվածության պատճառով:

### **Ի՞նչ կարծենա անցումը առավել կայուն էներգիայի**

Աշխարհը պետք է ամեն տարի եռապատկի կայուն էներգետիկ ենթակառուցվածքներին ուղղված ներդրումները՝ մինչ 2030 թ. ներկայիս 400 մլրդ դոլարը հասցնելով 1,25 տրլն դոլարի:

Էներգիայի հասանելիությունը բարելավելու համար էներգիայի ամենամեծ պակասորդ ունեցող շրջանները՝ Ենթասահարյան Աֆրիկան և Հարավային Ասիան, ունեն մեր աջակցության կարիքը: Դա ենթադրում է ավելի մեծ ջանքեր՝ գտնելու առողջությունը վնասող վառարանների մաքուր, արդյունավետ և մատչելի այլընտրանքներ:

### **Ի՞նչ կարող ենք անել՝ լուծելու այս խնդիրները**

Երկրները կարող են արագացնել անցումը մատչելի, հուսալի և կայուն էներգիայի համակարգի՝ ներդրումներ կատարելով վերականգնվող էներգիայի ռեսուրսներում,

կարևորելով Էներգիայի արդյունավետ օգտագործումը և ներմուծելով մաքուր Էներգետիկ տեխնոլոգիաներ ու ենթակառուցվածքներ:

Ձեռնարկությունները կարող են պահպանել և պաշտպանել Էկոհամակարգերը, որպեսզի կարողանան օգտագործել և ավելի զարգացնել Էլեկտրականության ու հիդրոէներգետիկ աղբյուրները և կենսաէներգիան, ու հանձն առնեն գործունեության համար անհրաժեշտ Էլեկտրականությունն ամբողջությամբ ձեռք բերել վերականգնվող աղբյուրներից:

Գործատուները կարող են նվազեցնել տրանսպորտի ներքին պահանջը՝ գերակայություն տալով հեռահաղորդակցությանը և խրախուսելով ավելի քիչ Էներգիա սպառող տրանսպորտային միջոցներից օգտվելը:

Ներդրողները կարող են ավելի շատ ներդրումներ կատարել կայուն Էներգիայի ծառայություններում՝ արագորեն շուկա բերելով նոր տեխնոլոգիաներ:

Դու կարող ես ինսայել Էլեկտրաէներգիան՝ Էլեկտրականությանը միացված սարքերը, այդ թվում՝ քո համակարգիչը, ամբողջությամբ անջատելով հոսանքի աղբյուրից, երբ չես օգտագործվում:

Ածխածնի արտանետումները նվազեցնելու համար դու կարող ես նաև հեծանիվ վարել, զբոսնել կամ օգտվել հանրային տրանսպորտից:

Կայուն զարգացման նպատակների և 7-րդ նպատակի մասին առավել մանրամասն տեղեկությունների համար կարող եք այցելել հետևյալ հղումով՝

<http://www.un.org/sustainabledevelopment>